

Թան բոլորը, ու հոն ըլլան Իւղարերից աւետարանին ու պատարադին: Եթէ մէկը Իւղարերիցին չգտնուի, 15 ստակ տուգանք պիտի տայ, իսկ պատարադին չեկողը 30 ստակ:

Թ. Պատանեկաց եղբայրութիւնը պէտք է ամէն տարի յիշատակ մը շինէ եկեղեցիին մէջ: Իրբեւ աշխարհիկ պարտականութիւն՝ կանոնադրութիւնը կը թուէ:

Ա. Բոլոր պատանիները իրենց մէջէն կ'ընտրեն իրենց պատանեկապենները, որոնք կը վաւերացուին եկեղեցականներուն կողմէ:

Բ. Պատանեկապենները կը կիրարկեն սոյն կանոնները, իսկ պատանիները՝ կը հնազանդին անոնց: Եթէ վէճ մը ունենան պատանեկապենները կամ եղբայրութիւնը իրենց միջեւ, եկեղեցականը՝ իշխաններուն եւ ծերերուն հետ՝ վճիռ կ'արձակէ: Եթէ չհնազանդին վճռին՝ 12 օրս մոմ տուգանք կուտան:

Գ. Պատանեկաց ժողովը չի կրնար դատել պատանեկապետը՝ առանց եկեղեցականին:

Դ. Պատանեկապետները իրենց մէջէն գըլխաւորներ կ'ընտրեն՝ որոնց հետ կը տեսնեն անհրաժեշտ դատաստանները:

Ե. Ամէն ծնողը իր 12 տարեկան տղան պարտաւոր է պատանեկաց ժողովին բերել եւ վճարել պերպլմծայ կոչուած մուտքի դրամը, եւ այդպէսով իր տղան եղբայր ընել միւսներուն եւ հաղորդ՝ Ս. Էջմիածնի օրհնութեան: 12 տարեկանէն վար տղան պարտաւոր չէ որեւէ տուրք տալ:

Զ. Պատանիներուն անունը եւ անոնց ըրած վճարումը կ'արձանագրուի մասնաւոր գրքի մը մէջ:

Է. Ամէն պատանի պարտաւոր է հնազանդել իր պատանեկապետին:

Ը. Պատանեկաց ժողովի դատաստանին ոչ ոք իրաւունք չունի խառնուիլ՝ ոչ հայրն ու եղբայրը, ոչ ալ աղագիանն ու ընկերը: Միջամբատողը 12 մառչիլ տուգանք կը վճարէ վանքին:

Թ. Տարին երկու անգամ պէտք է ժողովին մէջ այս կոնդակը կարդան՝ որպէսզի միշտ ի մտի ունենան անոր հրահանգները:

Ճ. Երբ պատանի մը նշանուի պէտք է նախ իր եղբայրներուն հետ հաշտուի, իր տուրքերը

վճարէ, եւ յետոյ միայն պսակի հրաման ստանայ:

ՃԱ. Երբ հարսնիք ըլլայ՝ բոլոր պատանիները իրենց պատանեկապետներուն հետ պէտք է երթան հարսնիքին, եկեղեցի բերեն պսակի, փեսին տունն երթան եւ սպասարկեն հարսնիքին:

ՃԲ. Պատանիները պարտաւոր են անսալ վառահներուն ամէն հրակէրին: Թերացողին տուգանքն է 3000 ստակ:

Կոնդակը ի վերջոյ նզովք կը կարգայ անոնց որ կը մերժեն հնազանդիլ:

Յովսէփ Արղութեանցի իրր նուիրակ պատրաստած եւ վաւերացուցած այս կանոնադրութիւնը, հաստատուած է յետոյ իր իսկ կաթողիկոսութեան օրով: Եւ Էջմիածնի կողմէ վաւերացուած վերջին կանոնադրութիւնն է ատ: Անկէ յետոյ մէկ կողմէ կազմակերպութիւնը կը թուլնայ Մոլտովայի մէջ, եւ միւս կողմէ Էջմիածինը նուազ կը հետաքրքրուի հեռաւոր թեմերով, զանոնք լքուած կը պահէ:

«Կտրիճ»ները գոյութիւն ունեցած են Մոլտովիոյ հայաշատ քաղաքներուն մէջ մինչեւ անցեալ դարու կէսերը: Եաչէն, Պոթոլանէն եւ Ռոմանէն զատ Պաքըուն ալ ունեցած է իր «Կտրիճներուն Եղբայրութիւնը»: Գրիգոր Կոյլավ որ ուսումնասիրած է այդ ընկերակցութիւններուն կեանքը, մինչեւ 1852 կը հասցընէ անոնց գոյութիւնը (Aurora, 1906): Պաքըուի եղբայրութեան պատկանած անձէ մը Կոյլավ քաղած է նոյնիսկ պատմութիւն մը «Կտրիճներու Եղբայրութեան» կեանքէն: Գրիգոր Կոյլավ Կտրիճներու Եղբայրութեանց մասին համառօտ ուսումնասիրութիւն մը ռումաներէն հրատարակած է նաեւ գրքոյկով (Statutele breslelor tinerilor botoseneni, ieseni si romascani, Jasi, 1896, էջ 1-10):

Մեր ձեռքը անցաւ 1846 Ապրիլ 9 թուակիր թղթիկ մը, որով Ռոմանի «Հայոց Ազգային կառավարութիւնը» ղեմելով «առ յարգելի ազայ վատահան Ռոմանու» կ'ըսէ. «Կառավարութիւնս ազգ առնէ յարգութիւններուդ որ բոլոր ջանքը գնիք ու զպաները պրաստավայի կամ եկեղեցւոյ թէ վարագուրն ու գրքերու